



## Լաբորատոր աշխատանք

### ՇՓՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

**Աշխատանքի նպատակը:** Ուսումնասիրել շփման եղանակով մարմինների էլեկտրականացման երևույթը: Որոշել լիցքավորված մարմինների լիցքերի նշանները:

**Տիչենք.** մարմնի բացասական լիցքը պայմանավորված է նրանում էլեկտրոնների ավելցուկով, իսկ դրական լիցքը՝ նրանում էլեկտրոնների պակասով: Մարմինների շփման ժամանակ էլեկտրոնները մի մարմնից անցնում են մյուս մարմնին և արդյունքում երկու մարմինն էլ էլեկտրականանում են:

**Անհրաժեշտ նյութեր և սարքեր:** Ապակյա երկու նույնանման ձողիկ, թղթի մանր կտորներ, Ռետինե ձեռնոցներ:



0496



### Աշխատանքի ընթացքը:

1. Վերցրեք ապակյա ձողիկը և շփեք չոր թղթի թերթին: Շփելուց հետո ձողիկը մոտեցրեք սեղանին լցված թղթի մանր կտորներին: Ի՞նչ եք նկատում: Արդյունքը գրանցեք աղյուսակում: Կրկին շփեք ձողիկը թղթի թերթին և մոտեցրեք այս անգամ ջրի բարակ շիթին: Ի՞նչ եք նկատում: Արդյունքը գրանցեք աղյուսակում: Արեք համապատասխան եզրակացություններ:

2. Ապակյա ձողիկը շփեք ռետինե ձեռնոցով: Այնուհետև հերթա-

կանորեն ձողիկը և ռետինե ձեռնոցը մոտեցրեք թղթի մանր կտորներիին: Ինչ եք նկատում: Արդյունքները գրանցեք աղյուսակում: Արեք համապատասխան եզրակացություն:

3. Ռետինե ձեռնոցները (կամ ապակյա ձողիկները) շփեք միմյանց և ձեռնոցներն հերթով կրկին մոտեցրեք թղթի մանր կտորներին: Ինչ եք նկատում: Արդյունքները գրանցեք աղյուսակում: Արեք համապատասխան եզրակացություն:

### Փորձի արդյունքների գրանցման աղյուսակ

Փորձը	Փորձի արդյունքը	Եզրակացություն
1. Ապակյա ձողիկը շփեցինք չոր թղթի թերթով և մոտեցրինք թղթի մանր կտորներին: 2.... 3....	1. 2. 3.	1. 2. 3.